

ՀԱՅ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ

Գիտական հոդվածների ժողովածու

Դ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ. Գ. Ավետիսյան, Ն. Հ. Ավետիսյան

Ուրարտական ճարտարապետության, քաղաքաշինության ուսումնասիրումն ընդհանուր առմամբ ընթացել է ուրարտական մշակույթի ուսումնասիրմանը զուգահեռ: Որպես առանձին գիտաճյուղ այն ձևավորվել է սակայն միայն XX դ. երկրորդ կեսերից:

Ուրարտական ճարտարապետության ամենավաղագույն նկարագրությունը պատկանում է Մ. Խորենացուն, որը Շամիրամին է վերագրում Վանի ամուր պարիսպները՝ պղնձակերտ դռներով, ընդարձակ փողոցներով, ամբարտակներով, ջրանցքներով, բաղնիքներով, երկհարկ և եռահարկ ապարանքներով և ժայռափոր շինություններով: Խորենացու ճշգրիտ նկարագրությունները հիմք հանդիսացան եվրոպական արևելագետների (Սեն-Մարտեն, Շուլց) համար XIX դ. սկզբներին սկսելու ուրարտական մշակույթի հետազոտությունը: Սկզբնական շրջանում մասնագետները բավարարվում էին հավաքելով և մասամբ վերծանելով ուրարտական արձանագրությունները: Եվ միայն XIX դ. վերջերից սկսվեցին նաև հնագիտական աշխատանքները և մասամբ ուշադրություն դարձվեց ճարտարապետությանը, քաղաքաշինությանը (քննարկվող հարցերի շուրջ հրատարակված գրականության ցանկի մի որոշ մասը ներկայացված է հոդվածի վերջում):

1879 թ., Վանի արևելյան ծայրամասում գտնվող Թոփրաք Քալե ամրոցում, սկսվեցին առաջին հնագիտական սիստեմատիկ պեղումները, որոնք ընդհատումներով շարունակվեցին մինչ 1938 թ. (Կլեյտոն, Ռեյնոլդս, Ռասամ, Լեհման-Հաուպտ, Բելք, Մառ, Օրբելի, Լեիք): Այս փոքրածավալ հետազոտությունները սակայն իրենց առջև չէին դնում ուրարտական քաղաքաշինության ուսումնասիրման խնդիրներ, այլ բավարարվում էին առանձին կառուցվածքների բացահայտմամբ և արձանագրական նյութի հավաքումով ու վերծանմամբ:

Ուրարտական առաջին հուշարձանը, որ պեղվեց և ճարտարապետական տեսանկյունից ուսումնասիրվեց հանգամանորեն Թեյշերախինին էր (Կարմիր Բլուր), որի նախնական հետազոտությունը սկսվեց 1939 թ. իսկ կանոնավոր պեղումները՝ 1939-1967 թթ. Բ. Պիտրովսկու ղեկավարությամբ: Այս պեղումները հնարավորություն տվեցին պարզելու ուրարտական քաղաքաշինության սկզբունքները՝ միջնաբերդի և քաղաքի բնակելի թաղամասերի փոխադարձ դիրքորոշումը, փողոցների և տների հատակագծային ցանցը, սոցիալ-տնտեսական շերտավորման խնդիրները ևն: Այս

Հարցերին են նվիրված Կ. Հովհաննիսյանի և Հ. Մարտիրոսյանի աշխատությունները:

Ուրարտական միջնաբերդի ներքին տարածության կազմակերպման, պալատական և պաշտամունքային համալիրների ընդհանուր հատակագրման ուսումնասիրման համար արժեքավոր նյութեր տվեցին էրեբունիի պեղումները, որ կատարվեցին 1950-1969 թթ. Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ:

Հիշարժան են Արգիշտիխինիլի պեղումները: Այս հուշարձանի նախնական ուսումնասիրությունը սկսվել էր դեռևս XIX դ. առաջին կեսին, սակայն կանոնավոր ուսումնասիրությունների հիմքը դրվեց միայն 1962 թ.: Հ. Մարտիրոսյանի, Բ. Առաքելյանի և Գ. Տիրացյանի ղեկավարությամբ: Արգիշտիխինիլի պեղումները խիստ հարստացրին ուրարտական ճարտարապետության մասին մեր ունեցած պատկերացումները, որոնք ամփոփված են հատկապես Կ. Ղաֆաղարյանի աշխատություններում:

Միջնաբերդով և քաղաքային պարսպով ամրացված ուրարտական բնակավայրի յուրօրինակ նմուշ է Արագած ամրոցը, որի պեղումները կատարվեցին 1954-1955 և 1980-ական թթ. (Կ. Հովհաննիսյան, Հ. Ավետիսյան) և նոր նյութեր տվեցին ուրարտական քաղաքաշինության վերաբերյալ:

Վերջին՝ ետխորհրդային տարիներին ևս շարունակվում է ուսումնասիրվել ուրարտական ճարտարապետությունը: Այս առումով հատկապես կարևորվում են Հայ-իտալական արշավախմբի աշխատանքները Սևանի ավազանում սկսած 1994 թ.-ից (Ս. Հմայակյան, Ռ. Բիշինյան), որի ընթացքում ուսումնասիրվել են բազմաթիվ, այդ թվում ուրարտական, ամրոցներ: Բացառիկ նյութեր են ձեռք բերվել Օշականում՝ Դիդի Կոնդ բլրի վրա գտնվող Ք.ա. VII դ. թվագրվող դղյակ-ամրոցի պեղումների ժամանակ (Ա. Քալանթարյան): 1998 թ. սկսած շարունակվում են էրեբունիի պեղումները (Յ. Տեր-Մարտիրոսով, Ա. Փիլիպոսյան): 1990-ական թթ. ուսումնասիրվել են ուրարտական երկու հուշարձան Դովրին (Ս. Հմայակյան) և Արամուսը (Հ. Ավետիսյան): Այսինքն տիպի հուշարձանների հայտնաբերումը և ուսումնասիրումը (Ա. Զիլինգիրով) Արևմտյան Հայաստանում լրացնում են մեր պատկերացումները ուրարտական պետության կենտրոնական և արևմտյան շրջանների ճարտարապետության մասին:

Ուրարտական ճարտարապետությունն ուսումնասիրելիս հիմնականում խոսք է գնում քաղաքաշինության ընդհանուր սկզբունքների, ամրաշինության, բնակարանաշինության, մոնումենտալ կառույցների մասին: Ուսումնասիրման համար հատկապես հարուստ նյութ են տալիս ուրարտական բազմաթիվ ամրաշինական կառույցները: Ուրարտական մի շարք ամրոցների նկարագրություններ ունի դեռևս Կ. Լեհման-Հաուպտը,

որը կատարել է այս հուշարձանների դասակարգման առաջին փորձը՝ հիմք ընդունելով պարսպների շարվածքների միջև եղած տարբերությունները: Հնագետ Ա. Իվանովսկին, որ 1893 թ. գիտարշավի ժամանակ ուղեկցել է նշանավոր ասուրագետ Մ. Նիկոլսկուն, ուսումնասիրել է մի քանի ամրոցներ, պեղումներ կատարել Թաշբուրունում (Մենուխինիլի): Ուրարտական ամրոցներին (մասնավորապես Արագածին) անդրադարձել է Թ. Թորոմանյանը՝ Հայաստանի տարածքի կիլիկյան ամրոցներն ուսումնասիրելիս: Ուրարտական ամրոց-միջնաբերդերի համընդհանուր համեմատական ուսումնասիրություն և դասակարգում է կատարել Կ. Հովհաննիսյանը, որը ընդհանուր աղբյուրներ է նկատել ուրարտական և Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան ամրոց-բնակատեղիների միջև: Վերջին շրջանում աճել է հետաքրքրությունը Արևմտյան Հայաստանի և Պարսկահայքի ուրարտական ամրաշինական կառույցների հանդեպ, որոնց մեծ մասը նախնական հետազոտություններ են և տեղագրական քարտեզներ (Չ. Բըրնի, Վ. Քլայս, Ս. Կրոյ):

Բնակելի տներ պեղվել են դեռևս Կ. Լեհման-Հաուպտի կողմից Թոփրաք Քալեում, սակայն ուրարտական բնակարանային ճարտարապետության հիմնական ուսումնասիրությունը սկսվել է Թեյեբախինի պեղումներով, որտեղ առաջին անգամ ի հայտ եկան բնակելի տների մի շարք ամբողջական հատակագծեր: Զեռնակի Թեփեում, որտեղ պեղումներ են կատարել Չ. Բըրնին և Ռ. Լոուսոնը, հայտնաբերվել է կանոնավոր, հավասարաչափ և փոխողակա հայաց հատակագծային ցանցով տեղադրված տիպարային բնակելի տների զանգվածային կառուցապատում:

Ուրարտական տաճարային ճարտարապետության ուսումնասիրումը սկսվել է դեռևս Թոփրաք Քալեի տաճարի հայտնաբերմամբ XIX դ. վերջին: Սակայն հիմնական տվյալները ուրարտական տաճարաշինության վերաբերյալ ի հայտ եկան XX դ. երկրորդ կեսից, երբ պեղվեցին այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Ազնավուր Թեփեն, Ալթըն Թեփեն, Քայալը Դերեն, Չավուշ Թեփեն, էրեբունին: Առավել լավ է ուսումնասիրված պալատական ճարտարապետությունը հիմնականում էրեբունիի, Թեյեբախինի, Ալթըն Թեփեի, Քայալը Դերեի, Ադիլլեազի կանոնավոր պեղումների հետևանքով (Թ. Օզգյուլ, Չ. Բըրնի, Ս. Լյոյդ):

Ինչ վերաբերում է ուրարտական դամբանային ճարտարապետության ուսումնասիրմանը, ապա եթե մի կողմ թողնենք վիճափոր կառույցները, որոնք ուսումնասիրողների ուշադրությունը գրավել էին սկսած XIX դ., ապա բուն դամբարաններն ու թաղման ծեսը սկսվել են հետազոտվել միայն XX դ. երկրորդ կեսից սկսած (Չ. Բըրնի, Բ. Օզգյուլ, Ս. Հմայակյան, Ա. Փիլիպոսյան, Ի. Կարապետյան):

Մրանից դեռ կես դար առաջ ուրարտագիտությունը համարվում էր ասուրագիտության հարակից մի բնագավառ: Այսօր այն անկասկած առանձին գիտաճյուղ է հին արևելագիտության ընդհանուր համակարգում, որի մեջ են ներառվում ինչպես սեպագրագիտությունը, այնպես էլ հնագիտությունը:

Արդի ուրարտագիտական ուսումնասիրություններում կիրառվում են նոր, նախորդների վրա հիմնված, սակայն դրանցից էպպես տարբերվող մեթոդներ: Վիամագրագիտական ուսումնասիրություններում ի հայտ են եկել բազմաթիվ նոր ընթերցումներ և պատմական անցյալի վերիմաստավորումներ: Հնագիտական հետազոտություններում փորձ է կատարվում ուրարտական մշակույթը դիտարկել միջդիսցիպլինար ուսումնասիրությունների համատեքստում: Ուրարտական բնակավայրերի տարածականությունը սկզբունքները հասկանալու համար լայնորեն կիրառվում է աշխարհագրական ինֆորմացիոն համակարգերի նորագույն մեթոդները (GIS):

Չնայած երիտասարդ գիտաճյուղ լինելուն, արդեն այսօր կուտակվել է ահռելի քանակությամբ գիտական գրականություն, ուր քննարկվում են Ուրարտուի պատմության և մշակույթի բազմաթիվ հարցեր: Հայաստանում և արտերկրում լույս են տեսնում մի շարք գիտական հանդեսներ, որոնցում ուրարտագիտական թեմաները բավականին հաճախ են քննարկվում (Պատմա-Բանասիրական Հանդես, Լրաբեր Հասարակական Գիտությունների, Բանբեր Երևանի Համալսարանի, Вестник Древней Истории, Anatolian Studies, Archäologische Mitteilungen aus Iran, Studi Micenei ed Egeo-Anatolici, Anadolu Araştırmaları, Armenian Journal of Near Eastern Studies, ևն):

Մինչև XX դ. վերջը լույս տեսած ուրարտագիտական գրեթե բոլոր հրատարակությունները ամփոփված են Պ. Զիմանսկու «Հին Արարատը» արժեքավոր մատենագրական աշխատության մեջ: Ուրարտական հնագիտական հուշարձանների քիչ թե շատ ամբողջական ցանկը, համապատասխան գրականությամբ հանդերձ, ամփոփված է «Ուրարտուի տեղագրական քարտեզ» անվամբ լույս տեսած աշխատանքում, որ կազմվել է Վ. Քլայսի և Հ. Հաուպտմանի գլխավորությամբ: Ինչ վերաբերում է ուրարտական ճարտարապետությանը, ապա լույս են տեսել երկու կարևոր և ամփոփ աշխատանքներ, որոնցում կարելի է մանրամասն տեղեկություններ գտնել ուրարտական շինարվեստի մասին. դրանք են Կ. Հովհաննիսյանի և Տ. Ֆորբսի «Ուրարտական ճարտարապետություն» նույնանուն աշխատությունները: Ուրարտական ճարտարապետության տարբեր հարցերին են նվիրված նաև Վ. Քլայսի հիմնարար աշխատությունները: Ուրարտական թաղման կառույցներին և ծեսին վերաբերող ընդհանուր բնույթի ուսումնասիրությունները համեմատաբար քիչ են: Այդ հարցերին առանձին անդրադարձել են Չ. Բրենին, Բ. Օգյունը, Ս. Հմայակյանը, Ա. Փիլիպոսյանը:

Ուրարտագիտությունը պատկանում է արագ զարգացող պատմական գիտաճյուղերին: Ծնորհիվ Հայաստանում և հարակից երկրներում անընդհատ տեղի ունեցող հնագիտական աշխատանքների պարբերաբար վերիմաստավորվում են ուրարտագիտական խնդիրները, հարստացվում է համապատասխան գրականությունը:

Հուշարձանների, հնագիտական նյութը հնարավորություն է ընձեռում համակարգելու մեր գիտելիքները ուրարտական ճարտարապետության քաղաքաշինական աշխարհայացքի, բնակարանային, մոնումենտալ, վիմափոր, ջրամատակարարման կառույցների և շինարարական տեխնիկայի առանձնահատկությունների մասին: Այդ առանձնահատկությունները տարիների ընթացքում ընդհանրացրել են հիմնականում երեք մասնագետներ՝ Կ. Հովհաննիսյանը, Վ. Քլայսը և Տ. Ֆորբսը:

Ուրարտական քաղաքները հիմնականում փռված էին բարձր բլուրների ստորոտներում, որոնց գագաթներին վեր էին խոյանում նրանց պարսպապատ միջնաբերդերը: Միջնաբերդի իշխող բարձր դիրքը իրենց առաջ փռված հարթավայրերի նկատմամբ նպատակ ուներ տեսադաշտում պահել այն ճանապարհները, որոնք տանում էին դեպի տվյալ բնակավայրը: Մյուս կողմից, բլուրների գագաթները պարփակող պարիսպները բնակավայրերի պաշտպանության երաշխիքն էին: Բերդերի հետագա հզորացումն արտահայտվում էր մի քանի շարք արտաքին պաշտպանական պարիսպների կառուցումով:

Վանի թագավորության քաղաքները ուրարտական և ասորեստանյան սեպագիր արձանագրություններում նշվում են URU գաղափարագրով (ուրարտ. patari): URU-ն նշանակում էր «բնակավայր» անկախ նրա մեծությունից և բնույթից: Միայն այսպես կարելի է հասկանալ ուրարտական արքաների կողմից մեծաքանակ URU-ների գրավման հանգամանքը: Այսպես, օրինակ, Սարգուրի II-ը հաղորդում է, որ նա մեկ օրում Իգանի երկրում գրավել է 200 քաղաք և 35 բերդ: Ինչպես երևում է նշված թվերից, ավելի քիչ թվով բերդեր էին գրավվում, քան քաղաքներ, հետևապես միշտ էլ, որ քաղաքներն ունեին բերդեր: Բերդերը կազմում էին այն միջուկը, որոնց շուրջը փռված էին քաղաքները: Այդ հաստատվում է բազմաթիվ բերդերի, մասնավորապես Անիաշտանիա բերդի օրինակով, որն իր շուրջն ուներ 17 քաղաք:

Սակայն, բացի քաղաքներից, նրանց տարածքում էին գտնվում նաև ոռոգման ջրանցքներ, մշակվող դաշտեր, այգիներ, անտառներ, որոնք կազմում էին գյուղատնտեսական խոշոր միավորումներ: Նրանցում ամրացված էր միայն կենտրոնական քաղաքն իր բերդով (E.GAL): Այդ ամբողջ տարածքը կոչվում էր ըստ երևույթին Asuni, որ հայերեն մոտավորա-

պես կարելի է թարգմանել որպես «մարդ»: Նման միավորումը արտահայտում էր թերևս տնտեսական մի ամբողջ համակարգ: Տարածական առումով այն պատկերում էր կենտրոնական ամրացված քաղաք իր E.GAL-ով, որի շրջակա տարածքներում փռված էին URU-ները, կամ գյուղական այն միավորումները, որոնք կազմում էին այդ համակարգի տնտեսական հիմքը:

Միայն այդ կենտրոնական քաղաքների մակերեսները, պեղումների տվյալների համաձայն, կազմում էին շուրջ 100-200 հեկտար: Արտակարգ մեծ չափերի էր հասել Արգիշտիխինիլին՝ 400-500 հեկտար տարածքով, որի սահմանների մեջ են մտել նաև քաղաքի գյուղական մոտակա բնակավայրերը:

Քաղաքների տարածքները արտահայտում են նաև քաղաքների ազգաբնակչության քանակը: Թեյշեբախին, օրինակ, իր կառուցապատման խտությունը, եթե այն համեմատելու լինենք համանման քաղաքների հետ, պետք է ունենար մոտ 20 հազար բնակիչ:

Ուրարտական քաղաքների պատմական կազմավորումը, մասնավորապես նրանց տեղի ընտրության տեսակետից, համաձայն ասորեստանյան աղբյուրների, պայմանավորված էր քաղաքների այնպիսի փոխադարձ դասավորությամբ, որոնք իրար առնչվում էին տեսողական կապով: Ռազմական կամ այլ վտանգի դեպքում քաղաքների բարձր բլուրների վրա գտնվող միջնաբերդերից, որոնք պահպանում էին տեսողական այդ կապը, վտանգը ազդարարվում էր խարույկներից բարձրացող կրակի պայմանական նշաններով, որով փոխադարձաբար համաձայնեցվում էին քաղաքների անհրաժեշտ ռազմական գործողությունները: Սարգուր II-ի մի արձանագրությունից երևում է, որ ուրարտական ամրացված վայրերը այդ ձևով կապակցվելով իրար հետ, կազմում էին մեկ շղթայաձև համակարգ: Այսպիսով, ուրարտական քաղաքաշինական ծրագիրը թելադրում ու պայմանավորում էր հիմնադրվող քաղաքների ոչ միայն տարածքների արժեքավորման տեղային հանգամանքներով, այլ հիմնականում տվյալ տարածքի համակարգում փոխադարձաբար շղկապված նրանց ռազմավարական դիրքով:

Սակայն ամեն դեպքում չէ, որ հնարավոր էր քաղաքների միջև տեսողական կապ ստեղծել: Նման դեպքերի համար, որպես կապակցող անհրաժեշտ օղակներ քաղաքների միջև, վեր էին խոյանում աշտարակաձև կառույցներ՝ սահմանափակ ներքին տարածություններ, ինչպիսիք էին Ագրաթ Թեփեն (Իրան), կամ սովորական աշտարակներ, որոնք պատկերված են ուրարտական արվեստի տարբեր նմուշների վրա՝ նրանց վեր խոյացող նիզականման կրակ պատկերող նշանով:

Ռազմական միջոցառումներ ձեռնարկվում էին նաև քաղաքների ներքին տարածքներն ապահովելու համար, եթե այնտեղ ներխուժեին թշնամու զորաբանակները: Այդ դեպքերի համար է, որ քաղաքների հատվածները

բաժանվում էին հզոր պարիսպներով, որոնց նպատակն էր խափանել քաղաք ներխուժած թշնամու ազատ տեղաշարժերը և դրանով ստիպել ծանր մարտեր մղել ամեն մի թաղամասի համար:

Ռազմական պրոբլեմի հետ մեկտեղ, քաղաքաշինության մեջ ոչ պակաս կարևորություն ունեին նաև սոցիալական մեկնակետերը: Քաղաքային պարիսպներ կառուցվում էին ոչ միայն արտաքին թշնամիների դեմ, այլ դրանով վերնախավը ապահովում էր նաև պալատի մեկուսացումը քաղաքի բնակիչներից: Օրինակ Թեյշեբախինում պաշտպանական նման պարիսպները ապահովում էին պալատի մեկուսացումը քաղաքի ստորադաս ազգաբնակչությունից: Բնորոշ է նաև, որ Թեյշեբախինում դեպի փողոց դուրս եկող բնակելի տների բոլոր արտաքին պատերը, որպես կանոն, հինարևելյան ճարտարապետության նմանությամբ, խուլ էին, իսկ տների միակ դռները բացվում էին թաղամասերի փողոցների վրա:

Եթե դիտարկենք ուրարտական քաղաքների թաղամասերի կամ առանձին շենքերի հատակագծերը, չափերը, սենյակների քանակը, ինչպես նաև շենքերի դիրքը փողոցների նկատմամբ, կարելի է պատկերացում կազմել սոցիալական տարբեր խավերի տեղաբաշխման սկզբունքների մասին այդ քաղաքներում: Այս հարցի մասին հատկապես առատ նյութ են տալիս Թեյշեբախինի պեղումները: Այնտեղ, վերնախավի բնակելի տները կառուցված են սեկցիոն սկզբունքով, բավական ընդարձակ ներքին տարածություններով ու սյունազարդ սենյակներով, և դրանով իսկ որոշակիորեն արտահայտում են իրենց պատկանելությունը:

Պեղումները սպառնչ պատկերացում չեն տալիս քաղաքների բարեկարգման մակարդակի մասին: Առանձին տեղեկություններից կարելի է միայն ենթադրել, որ նրանցում եղել են ջրմուղներ, ջրամբարներ, կամուրջներ, զբոսայգիներ ու բաղնիքներ: Պահպանվել են նաև ասորեստանյան արքաների ուղղակի վկայությունները ուրարտական քաղաքների հրապարակներում վեր խոյացող արձանների մասին:

Ուրարտում կային թագավորանիստ, վարչատնտեսական, ռազմական, ինչպես նաև պաշտամունքային նշանակության քաղաքներ: Թագավորանիստ քաղաքների թվին են պատկանում երկրի մայրաքաղաքները՝ Արգաշկուն, Տուշպան, Ռուսախինիլին (Թոփրաք Քալեն): Տուշպան եղել է ուրարտական պետության կենտրոնը այդ պետության զարգացման գրեթե ողջ ժամանակաշրջանում: Կա տեսակետ, ըստ որի, Ռուսայի օրոք Տուշպային, որպես երկրի կենտրոնի, փոխարինել էր Ռուսախինիլին:

Վարչատնտեսական նշանակության քաղաքները կազմում էին երկրի քաղաքների հիմնական մասը: Այդպիսի քաղաքներն իրենց միջնաբերդի շուրջն ունեին մի միասնական տնտեսական միավորում կազմող բազմա-

թիվ բնակատեղիներ: Նման միավորումը ունի նաև դաշտերի արհեստա-
կան ոռոգման համար անհրաժեշտ համակարգ ներկայացնող բազմաթիվ
ճյուղավորումներ: Այդ համակարգի կազմի մեջ էին մտնում նաև ջրանցք-
ները, թունելները, ինչպես նաև արհեստական մեծ ջրամբարները: Մթերք-
ների զգալի մասը սովորաբար վերամշակվում էր տեղերում, ուր այդ նպա-
տակի համար գոյություն ունեին համապատասխան արհեստանոցներ, որից
հետո արտադրանքը տեղափոխվում էր մայրաքաղաք Տուշպա: Կարմիր
Բլուրի միջնաբերդում հայտնաբերված են ձիթհան, գինու և գարեջրի ար-
հեստանոցներ: Արհեստանոցների զարգացմանը նպաստում էր երկրում
հայտնի բոլոր անհրաժեշտ նյութերի առկայությունը (փայտ, քար, կավ, մե-
տաղ): Ուրարտական վարչատնտեսական խոշոր քաղաքներն էին Արգիշտի-
խինիլին, Թեյշեբախին, Ալթըն Թեփեն, Օշականը և մյուսները, որոնք իրենց
պարսպապատված միջնաբերդերով, շրջակա բազմաթիվ գյուղական ավան-
ներով կազմում էին գյուղատնտեսական հզոր համակարգեր, ստեղծելով
քաղաքաշինական առումով տարածական միասնական համակարգ:

Ռազմական հենակետ քաղաքները ևս կարևոր նշանակություն ունեին
ուրարտական քաղաքաշինական համակարգում: Ուրարտացիները ստեղ-
ծեցին յուրահատուկ կառույցներ՝ զորանոցներ, ախոռներ, մրցադաշտեր,
լճակներ (ռազմական ձիերին լողացնելու համար), բերդեր, ռազմական
ճամբարներ ու քաղաքներ: Ռազմաստրատեգիական բոլոր կառույցներն ի-
րենց տեխնիկական մակարդակով միանգամայն համապատասխանում էին
հարակից երկրների նույնատիպ կառույցների բոլոր սկզբունքներին: Ու-
րարտական հենակետ քաղաքները սպառազինված էին բավականաչափ
լավ, ինչի մասին կարելի է եզրակացնել Սարգոն II-ի տարեգրություննե-
րից, ուր նա հայտնում է, թե նա Ուրարտուում տեսել է հզոր ու գեղեցիկ
բերդեր՝ 120 շերտ աղյուս ունեցող պատերի բարձրությունը (կազմում է
չուրջ 18 մետր): Բերդերն ունեին 2-3 շարք պարիսպներ՝ իրենց աշտարակ-
ներով ու որմնահեցերով և տեղ-տեղ էլ իրենց առջևում արված խրամատ-
ներով: Այդպիսիք են Ուայախ, Արգիշտիունա, Կալլանիա, Տարուի ու
Տարմակիսու բերդերը: Ինչպես պարզում են Արին Բերդի պեղումները, ու-
րարտական ամրոցները լավ էին հարմարեցված երկարատև պաշարումնե-
րին դիմանալու համար, քանի որ նրանցում գտնվում էին ցորենի մեծ շտե-
մարաններ և ջրավազաններ: Ուրարտական ամրոցները համարյա միշտ
կանգնած էին բարձր բլուրների վրա կամ եզրագծված էին խոր ձորերի մի-
ջով հոսող գետերի ոլորապտույտներով և պաշտպանված էին անմատչելի,
ուղղագիծ ապառաժ ավերակով: Այդպիսի ամրոցներից էին էրեբունին, Բաս-
տամը (Ռուսասխինիլի), Զեռնակի Թեփեն, Ագրաբ Թեփեն ևն:

Պաշտամունքային քաղաքներից են ուրարտական դիցարանի գերա-
գույն երրորդություն՝ Խալդիի, Թեյշեբայի ու Շիվինիի պաշտամունքային
կենտրոնները: Ուրարտական գերագույն աստվածություն՝ Խալդիի պաշտա-
մունքային կենտրոնը Մուսասիր քաղաքն էր, կամ Արդինին, ինչպես այն
անվանում են ուրարտացիները, որը գտնվում էր Ռեանդուզ քաղաքի շրջա-
կայքում: Թեյշեբա աստվածության պաշտամունքի կենտրոնը Կումենու
քաղաքն էր՝ Վանա լճից հարավ-արևելք, վերին Զաբ գետի միջին հոսանքի
շրջանում: Շիվինիի պաշտամունքի կենտրոնը մայրաքաղաք Տուշպան էր:

Ուրարտական քաղաքները հնարավոր է դասակարգել նաև ըստ հա-
տակազծային հորինվածքի տարբերության: Դրանք են ազատ հատակա-
զծումը, երկրաչափական կանոնավոր ցանցի համակարգը, խառը կառու-
ցապատումը և դարավանդային համակարգը: Ազատ հատակազծման
սկզբունքը ամենատարածվածն էր և զարգանում էր տարբերայնորեն, որի
հետևանքով բնակատեղիների փոփոխությունը ստեղծվում էին տնամեջ տա-
րածքներում: Տվյալ սկզբունքը հատկապես բնորոշ է գյուղական բնակա-
տեղիների համար (Արագած, Թուրքի Թեփե, Կալե Կամանա): Կանոնավոր
ցանցի համակարգի համար դասական օրինակ կարող է հանդիսանալ Զեր-
նակի Թեփեն: Սակայն ուրարտական քաղաքաշինություն համար առավե-
լապես բնորոշ էր խառը կառուցապատման սկզբունքը:

Յուրահատուկ է ուրարտական քաղաքների տեղադրությունը լեռնա-
յին շրջանների տեղանքի մեծ թեքությունների պայմաններում: Նման
տարածքներում քաղաքներն ունեին իրենց կառույցների աստիճանաձև
փոխանցումները, որոնք, ի վերջո, կարծես ստանալով տեսական հիմնավո-
րում, դառնում էին քաղաքաշինական հաստատուն օրենքներ: Այսպիսին է
Հայկաբերդը, որն ունի երեք արտաքին պարիսպներ, մեկը մյուսից բարձ-
րադիր տեղում, որոնց ետևի տարածությունները մինչև համապատասխան
նիշը լցված էին հողով՝ ընդլայնելու համար բերդի օգտակար մակերեսը:
Այդպիսին է եղել Մուսասիր քաղաքի կառուցապատումը, որը նույնպես
գտնվում էր լեռնային շրջանում:

Ուրարտական քաղաքներում առավել սուղ էր դրված հողային ֆոնդի
խնայողաբար օգտագործման պրոբլեմը, որը բխում էր քաղաքների պաշտ-
պանության ռազմավարական սկզբունքներից: Բազմահարկ բնակելի շեն-
քերի առկայության հանգամանքը հավանաբար հողատարածությունների
խնայողաբար օգտագործման սկզբունքի արգասիքն էր:

Ուրարտուում բնակելի տների կազմավորումը մի դեպքում որոշվում
էր բնակիչների անհատական պահանջներով, մյուս դեպքում այդ կազմա-
վորումը թելադրում էր բնակիչների հասարակական կենցաղի ուրույն վի-
ճակով: Վերջինս վերաբերվում է այն դեպքերին, երբ բնակիչները գինվո-

րական, ինչպես նաև վարչական մարմինների բարձրաստիճան գործիչներ էին, որոնք չունեին սեփական տնտեսություն և ենթակա էին պետական պարենավորման: Այս իրավիճակն Ուրարտուում ստեղծեց բնակելի տան այնպիսի տիպեր, որ պետական իշխանության և նրա պահանջների արգասիքն էին: Նման բնակելի տների հատակագծային հորինվածքները խարսխվում էին ճարտարապետության բնագավառում առաջացող նոր, այն է՝ «տիպային» լուծումների սկզբունքների վրա, իսկ դրա հետ մեկտեղ առաջ էին գալիս նաև բազմասեկցիոն ու բազմահարկ, ամեն առումներով իսկական քաղաքատիպ բնակելի շենքեր:

Ուրարտուի բնակարանային ճարտարապետության մասին առաջին տեղեկությունները պահպանվել են Խորենացու մոտ և վերաբերում են Տուշպային: Վերջինս, ըստ պատմահոր հաղորդումների, բավական մեծ, բարեկարգ, անառիկ մի բերդաքաղաք էր, բազմաթիվ երկ- և եռահարկ շենքերով: Վանի մոտ գտնվող Թոփրախ Կալե քաղաքի պեղումներից հայտնաբերված բրոնզե հարթաքանդակի հայտնաբերումը, ուր պատկերված է եռահարկ բնակելի մի տուն, հաստատեց Խորենացու հայտնած տեղեկության հավաստիությունը: Ներկայումս, բացի սովյալ հարթաքանդակից, ուրարտական բազմահարկ շենքերն իրենց տեսանելի մնացողների ձևերով ի հայտ են Կարմիր Բլուրի, Արագածի և Բաստամի միջնաբերդերում:

Ուրարտուի բնակելի ճարտարապետության մասին հայտնի տեղեկությունները պարզում են բնակելի տների հետևյալ երեք դասերը՝ մենատներ, բնակելի տներ խմբային կառուցապատումներով և մեկ ու բազմահարկ սեկցիոն տներ:

Մենատներն իրենց մեջ միավորում էին բնակելի, տնտեսական, պահեստային սենյակներ, ընտանի կենդանիների համար հատկացված համապատասխան հատվածներ և կառուցվում էին ավանդական՝ հում աղյուսի պատերով և քարե գետնախարխիսների վրա, հարթ ծածկերով, վերևի լուսավորությամբ, իսկ ամբողջությամբ վերցրած ներկայացնում էին պարզապատկեր ներքին տարածություններ՝ իրենց արտաքին միակ դռնով: Տան մեջ էր գտնվում նաև նրա պաշտամունքային անկյունն իր համապատասխան քանդակակերտ կուռքով: Հայտնի օրինակների թվին են պատկանում Արգիշտիխիլի, Արագածի, Թեյշեբախի մենատները:

Բնակելի տները խմբային կառուցապատումներով ունեցել են բազմաթիվ բնակելի, տնտեսական, պահեստային սենյակներ, դահլիճ, բակ՝ տնտեսական կարիքների և առանձին հատված ընտանի կենդանիներ պահելու համար: Այսպիսի տները ունեին փայտյա հարթ ծածկ, քարե պատեր, իրենց հում աղյուսի վերևի շարքերով, այսինքն, կառուցված էին ուրարտական ճարտարապետության ավանդական սկզբունքներով: Նման տների դասական օրինակները հայտնի են Թեյշեբախից և Բաստամից:

Ինչ վերաբերում է սեկցիոն բնակելի տներին, ապա սրանք ստեղծվել են բնակիչների կենցաղի անհատական պահանջների ընդհանրության հաշվառումով, ինչը պայմանավորված էր այնպիսի ապրելակերպով, երբ բնակիչը չունեի մասնավոր տնտեսություն և ենթակա էր պետական պարենավորման: Ներկա դեպքում, հավանաբար, դրանք պետական ծառայության մեջ գտնվող ռազմիկներ էին: Սեկցիոն տների հատակագծային լուծումների տիպարային սկզբունքները անակնկալ հորինվածքներ չեն չին Արևելքի ճարտարապետության համար: Դրանք հիմնականում մի շարք միատիպ սենյակներից և մի քանի սեկցիաներից բաղկացած մեկ կամ մի քանի հարկանի համալիրներ են համանման պայմաններում գտնվող բնակիչների (օր. ռազմական հրամանատարների) համար: Հիմքեր կան ենթադրելու, որ սրանք զորանոցային շենքեր (ուրարտ. barzudibiduni) պիտի լինեին: Նմանատիպ ճարտարապետության նմուշներ հայտնի են Թեյշեբախից և այլ ուրարտական հուշարձաններից:

Այսպիսով ուրարտական քաղաքաշինությունը Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. 9-6-րդ դարերի կարևոր նվաճումներից էր, որի ակունքները խարսխված են լեռնաշխարհի բրոնզեդարյան ավանդույթների հիմքի վրա:

Գրականության ցանկ

Ադոնց Ն., 1972, Հայաստանի պատմություն, Երևան.
 Այվազյան Ա., 1976, Արբա և ճահուկ բերդերը, Լրաբեր Հասարակական Գիտությունների 9, 87-95.
 Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Խ., 1988, Ուրարտու-Հայաստան, Երևան.
 Ավետիսյան Գ. Գ., 1996, Արագածի ամրաշինությունը, Բանբեր Երևանի Համալսարանի 1, 41-46.
 Ավետիսյան Գ. Գ., 1997, Արամուսի ամրաշինական համալիրները, Բանբեր Երևանի Համալսարանի 2, 118-124.
 Ավետիսյան Գ. Գ., 2001, Արագած, Երևան.
 Ավետիսյան Գ. Գ., 2002, Արագածի և Արամուսի պաշտամունքային կառույցներն ու քարակոթողները, Բանբեր Երևանի Համալսարանի 2, 52-56.
 Ավետիսյան Գ. Գ., Ավետիսյան Պ. Ս., 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա XI-VI դդ., Երևան.
 Ավետիսյան Պ., Բաղդասարյան Ռ., Հմայակյան Ս., Փիլիպոսյան Ա. 1996, Հայաստանի բրոնզ-երկաթի դարաշրջանի պարբերացման և ժամանակագրության հարցերի շուրջ, Հայաստանի Հանրապետությունում Դաշտային Հնագիտական Հետազոտություններին Նվիրված Ամենամյա Գիտական Նստաշրջանների Թեզիսներ, Երևան, 8-10.
 Գրեկյան Ե., 2002, Մանայի թագավորության պատմությունը, Թեկնածուական ատենախոսության սեղմագիր, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան.
 Եսայան Ս. Ա., 1995, Վանի ավազանի բիայնական ամրոցները, Պատմա-Բանասիրական Հանդես 1, 209-224.
 Եսայան Ս.Ա., Աբաջյան Լ. Վ., 1991, Ներքին Խնձոր (Քայալի Դերե) ամրոցը (Արևմտյան Հայաստանի ուրարտական ամրոցների մասին), Պատմա-Բանասիրական Հանդես 1, 110-121.
 Եսայան Ս. Ա., Բիյազով Լ. Ն., Հմայակյան Ս. Գ., Կանեցյան Ա. Գ. 1995, Երևանի բիայնական դամբարանը 2, Հայաստանի Հնագիտական հուշարձաններ, 16/III, Երևան, 55-79.

- Եսայան Ա.Ա., Քիլիմյան Գ. Ա. 1991, Հայկաբերդ ամրոցը, Լրաբեր Հասարակական Գիտությունների 6, 15-25.
- Չարյան Ա., 1986, Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան.
- Թորոմանյան Թ., 1942, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության I, Երևան.
- Իսրայելյան Մ. Ա., 1971, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան.
- Խանզադյան Է. 1979, Էլառ-Ղարանի, Երևան.
- Խանզադյան Է. Վ., Սկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս. 1973, Մեծամոր, Երևան.
- Խաչատրյան Ա. 1933, Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն, Երևան.
- Խաչատրյան Վ., 1998, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան.
- Կարազեռզեան Յ., 1998, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում I/1, Երևան.
- Հարությունյան Վ., 1978, Հին աշխարհի ճարտարապետությունը, Երևան.
- Հարությունյան Վ., 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան.
- Հմայակյան Ս. Գ., 1986, Պաշտամունքային շինությունները, քրմությունը, ծեսերը և տիեզերքի եռանասնության մասին պատկերացումը Ուրարտուում, Պատմա-Բանասիրական Հանդես 1, 113-133.
- Հմայակյան Ս. Գ., 1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան.
- Հմայակյան Ս., 1995, Ուրարտական պետության և մշակույթի ծնավորման խնդրի շուրջ, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ 16/III, Երևան, 105-106.
- Հովհաննիսյան Կ. Լ., 1973, Էրեբունի որմնակարները, Երևան.
- Հովհաննիսյան Կ., 1964, Ուրարտական ճարտարապետություն, Ակնարկ Հայ ճարապետության պատմության, Առաքելյան Բ.Ն., Սազմանյան Մ.Գ. (խմբ.), Երևան, 23-46.
- Հովհաննիսյան Կ., 1996, Ուրարտական ճարտարապետություն, Հայկական ճարտարապետության պատմություն, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), Երևան, 87-199.
- Ղաֆադարյան Կ., 1984, Արգիշտիխիմիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան.
- Ղաֆանցյան Գր., 1940, Ուրարտուի պատմությունը, Երևան.
- Ղաֆադարյան Կ., 1984, Արգիշտիխիմիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան.
- Մարտիրոսյան Հ., 1971, Զարի դարից Ուրարտու, Երևան.
- Մարտիրոսյան Հ. Ա., Թորոսյան Ռ. Ս., 1986, Արգիշտիխիմիլի սարկոֆագը, Պատմա-Բանասիրական Հանդես 3, 221-227.
- Մարտիրոսյան Հ., Մնացականյան Հ., 1958, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին; Տեղեկագիր 10, 63-84.
- Մելքոնյան Մ., 1995, Ուրարտական ժայռափոր դամբարանները, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ 16/III, Երևան, 1-54.
- Սկրտչյան Ռ. Ա., Ավետիսյան Պ. Ս., 1995, Ուրարտական դամբարանների հնամարդաբանական նյութերը մ.թ.ա. 8-6-րդ դդ. պատմահնագիտական կոնստեքստում, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ 16/III, Երևան, 98-104.
- Շիրմազյան Գ., 1962, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան.
- Պիոտրովսկի Բ. Բ., 1971, Ուրարտական ճարտարապետություն, Հայ ժողովրդի պատմություն I, Ավադեմիական հրատարակչություն, Երևան, 398-406.
- Տիրացյան Գ. Ա., Արեշյան Գ. Ե., 1990, Հնագիտությունը և Ուրարտու-Հայաստան պրոբլեմը, Պատմա-Բանասիրական Հանդես 3, 70-75.
- Փիլիպոսյան Ա. Ս., Խաչատրյան Լ. Ե. 1995, Գեղիովտի վանտոսայան վիմափոր դամբարանը, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ 16/III, Երևան, 80-97.
- Փիլիպոսյան Ա. Ս., Սկրտչյան Ռ. Ա. 2001, Գեղիովտի վանտոսայան (ուրարտական) քարայր-դամբարանը, Հայաստանի Հնագիտական Հուշարձաններ 18/IV, Երևան.
- Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ. 2005, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003, Երևան.

- Քալանթարյան Ի., 2005, Ազարակի նորահայտ ժայռափոր դամբարանը, Հին Հայաստանի Մշակույթը XIII, Երևան, 154-160.
- Аветисян Г. Г., 1992, Биайнская керамика из памятников Араратской долины, Ереван.
- Аветисян П. С., 2003, Предварительные результаты раскопок памятника Агарак, Археология, Этнология и Фольклористика Кавказа, Абрамян Л. (ред.), Ереван, 52-57.
- Арутюнян Н. В., 1964, Земледелие и скотоводство Урарту, Ереван.
- Арутюнян Н. В., 1970, Биайнили (Урарту), Ереван.
- Арутюнян Н. В., 1985, Топонимика Урарту, Ереван.
- Арутюнян Н. В., 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван.
- Деведжян С. Г., 1981, Лори-Берд I, Ереван.
- Дьяконов И. М., 1956, История Мидии, Москва-Ленинград.
- Дьяконов И. М., 1963, Урартские письма и документы (пред. Б.Б. Пиотровского), Москва-Ленинград.
- Дьяконов И. М., 1968, Предыстория армянского народа, Ереван.
- Дьяконов И. М., 1994, Киммерийцы и скифы на древнем Востоке, Российская Археология 1, 108-116.
- Есаян С. А., 1966, Оружие и военное дело древней Армении, Ереван.
- Есаян С. А., 1969, Ереван: Археологический очерк, Ереван.
- Есаян С. А., 1976, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван.
- Есаян С. А., 1980, Скульптура древней Армении, Ереван.
- Есаян С. А., 1981, Находки урартских изделий в Ошаканском могильнике, Древний Восток и Мировая Культура, Дьяконов И.М. (ред.), Москва, 94-97.
- Есаян С. А., 1985, Об урартских дворцовых комплексах Ошакана, Культурное Наследие Востока, Бромлей Ю.В. (ред.), Ленинград, 112-121.
- Есаян С. А., Биягов Л. Н., Амаякян С. Г., Канецян А. Г., 1991, Биайнская гробница в Ереване, Археологические Памятники Армении 15/II, Ереван.
- Есаян С. А., Калантарян А., 1976, Позднеурартское погребение Ошаканского могильника, Историко-Филологический Журнал 3, 268-275.
- Есаян С. А., Калантарян А. А., 1988, Ошакан, I, Ереван.
- Калантарян А. А., Мелконян У. А., Жамкочян А. С., Бабалян Ф. С., Пилипосян А. С., 2003, Результаты раскопок 2002 года в Ошакане, Археология, Этнология и Фольклористика Кавказа, Абрамян Л. (ред.), Ереван, 112-121.
- Калантарян И., 2006, Археологическая библиография южного Кавказа. Армения, Археология Кавказа 1, 263-305.
- Кафадарян К. К., 1967, Новые данные по архитектуре Урарту, Советская Археология 4, 237-247.
- Кафадарян К. К., 1972, Заметки по урартской фортификации, Историко-Филологический Журнал 2, 151-162.
- Косян А. В., 1994, Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII-VIII вв. до н. э., Ереван.
- Курочкин Г. Н., 1994, Хронология переднеазиатских походов скифов по письменным и археологическим данным, Российская Археология 1, 117-122.
- Кушнарева К. Х., 1977, Древнейшие памятники Двина, Ереван.
- Куфтин Б. А., 1943, Урартский колумбарий у подошвы Арарата и куро-аракский "энеолит", Вестник Госсударственного Музея Грузии 13-В, Тбилиси.
- Марр Н. Я., Орбели И.А., 1922, Археологическая экспедиция 1916 г. в Ван, Петербург.
- Мартиросян А. А., 1954, Раскопки в Головино, Ереван.
- Мартиросян А. А., 1954б, О древнем поселении и могильнике близ Лениакана, Краткие Сообщения Института Материальной Культуры 55, 106-116
- Мартиросян А. А., 1956, Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода (IX-VIII вв. до н. э.), Вестник Общественных Наук 9, 61-84.

- Мартirosян А., 1960, К предыстории древнейших этапов культуры Армении, Историко-Филологический Журнал 1, 91-109.
- Мартirosян А. А., 1961, Город Тейшебаини, Ереван.
- Мартirosян А. А., 1964, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван.
- Мартirosян А. А., 1964б, О периодизации археологических памятников Армении эпохи Бронзы и Раннего Железа, Советская Археология 3, 21-36.
- Мартirosян А. А., 1967, Раскопки Аргиштихинили, Советская Археология 4, 220-236.
- Мартirosян А. А., 1974, Аргиштихинили, Археологические Памятники Армении 8, Ереван.
- Мартirosян А. А., Мнацаканян А.О. 1958, Урартский колумбарий Нор Ареша, Известия Академии Наук Армянской ССР 10, 63-84.
- Медведская И. Н., 1992, Периодизация скифской архаики и Древний Восток, Российская Археология 3, 86-107.
- Меликишвили Г. А., 1954, Наири-Урарту, Тбилиси.
- Меликишвили Г. А., 1958, К вопросу о хетто-цупанийских переселенцах в Урарту, Вестник Древней Истории 2, 40-47.
- Меликишвили Г. А., 1960, Урартские клинообразные надписи, Москва.
- Мнацаканян С. Х., Оганесян К. Л., Саинян А. А., 1978, Очерки по истории архитектуры древней и средневековой Армении, Ереван.
- Оганесян К. Л., 1955, Кармир Блур 4: Архитектура Тейшебаини, Ереван.
- Оганесян К. Л., 1958, Урартское поселение в селе Арагац, Вестник общественных Наук 4, 78-82.
- Оганесян К., 1961, Арин-Берд 1, Археологические Раскопки в Армении 9, Ереван.
- Оганесян К., 1968, Эребуни, Ереван.
- Оганесян К., 1968б, Город Эребуни, Историко-Филологический Журнал 3, 3-13.
- Оганесян К. Л., 1970, Архитектура Урарту, в кн. Всеобщая История Архитектуры 1, Москва, 257-272.
- Оганесян К. Л., 1980, Крепость Эребуни, Ереван.
- Оганесян К. Л., 1981, Урартские корни древнеармянского зодчества, Древний Восток и Мировая Культура, Дьяконов И.М. (ред.), 90-93.
- Оганесян К., 1985, Военное строительство в Урарту, Культурное Наследие Востока, Бромлей Ю.В. (ред.), Ленинград, 145-152.
